ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ՝ (093)554477

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

30 մայիսի 2022 թվական N 54-Ա

ԱԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊԱԳԱ ԳՅՈՒՂԻ «ՄԻԼԱ-ՓԱԹԻԼ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱԶԻԿ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 158-րդ և 160-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Նազիկ Սաֆարյանի 2022 թվականի մայիսի 27-ի դիմումը.

Կարգադրում եմ՝

1. Արաքս համայնքի Ապագա գյուղի «Միլա-Փաթիլ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նազիկ Սաֆարյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2022 թվականի հունիսի 2-ից՝ 25 (քսանհինգ) աշխատանքային և 1 տոնական օր տևողությամբ:

2. Տնօրենի պարտականությունները ժամանակավորապես վերապահել «Միլա–Փաթիլ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դաստիարակ Ֆլորա Հակոբյանին:
3. Նազիկ Սաֆարյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվականի հուլիսի 8–ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 30

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

24 մայիսի 2022 թվական N 318-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-Ի N 61-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 4-ի «Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2022 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» N 61-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

   Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի մայիսի 24
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ,գ.Գայ,Ա.Խաչատրյան 1,araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

24 մայիսի 2022 թվական N 319-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի N 277-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետի «զ»ենթակետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 10-ի «Արտյոմ Լևոնի Աբրահամյանի կողմից կառուցված ինքնակամ շինությունները օրինականացնելու մասին» N277-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումը.

   ««Գնել Առաքելյան» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի» բառերից հետո լրացնել «և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 2022DWEIMR»» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 24
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

25 մայիսի 2022 թվական N 320-Ա

ԱՐԿԱԴԻԱ ՌՈԲԵՐՏԻ ԹԱԹՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով սեփականատեր Արաքս գյուղի բնակիչ Արկադիա Ռոբերտի Թաթոյանի 2022 թվականի մայիսի 24-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի բնակիչ Արկադիա Ռոբերտի Թաթոյանին սեփականության իրավունքով պատկանող /04-017-0038-0012/ ծածկագրով տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 190.1 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը և 33.9քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունները՝ համաձայն «Ավագ Ավագյան» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 20228TT6S2: :
2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է բնակելի տան 1քմ-ի համար 1028 ՀՀ դրամ, օժանդակ շինությունների 1.0 քմ-ի համար՝ 616.8 ՀՀ դրամ. 1028*190.1քմ=195423 /մեկ հարյուր իննսունհինգ հազար չորս հարյուր քսաներեք/ ՀՀ դրամ, 616.8*33.9քմ=20910 /քսան հազար ինը հարյուր տաս/ ՀՀ դրամ:

Ընդամենը՝ 195423+20910=216333 /երկու հարյուր տասնվեց հազար երեք հարյուր երեսուներեք/ ՀՀ դրամ:

3. Ինքնակամ կառուցված շենք-շինությունների օրինականացման հաշվարկված վճարը՝ 216333 ՀՀ դրամ գումարը պետք է վճարվի Արաքս գյուղի N900325159151 հաշվեհամարին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացման համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած :

5. Սույն որոշումից բխող գույքային ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանումում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 25
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2022 թվական N 321-Ա

ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏԻՆ ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 11-րդ ենթակետը և «Գայոն» ՍՊԸ-ի փոխտնօրեն Արամ Խաչատրյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում գտնվող «Գայոն» ՍՊԸ-ն պատկանող «ՌԵԴ» առևտրային օբյեկտին 2022 թվականի համար տալ ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 11-րդ ենթակետի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 25
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա.Խաչատրյան 1,araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

25 մայիսի 2022 թվականի N 322-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N 301-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33–րդ հոդվածի 1–ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 19-ի «Անշարժ գույքի բաժանման և հասցեավորման մասին» N301-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

   Որոշման 1-ին կետում նշված «0,641» թիվը փոխարինել «0,631» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 25

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա.Խաչատրյան 1,araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

26 մայիսի 2022 թվականի N 323-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Մեծամոր գյուղի վարչական տարածքում գտնվող Բադալյան Սարգիս Պատվականի սեփականության իրավունքով պատկանող 04-064-0013-0008 ծածկագրով տնամերձ հողամասին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք,գյուղ Մեծամոր ,Մ.Սարյան փողոց ,10 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 26

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա.Խաչատրյան 1,araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

26 մայիսի 2022 թվականի N 324-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող Բետխեմ Մկրտչի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-005-0028-0022 ծածկագրով բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք,գյուղ Ակնաշեն ,Բաղրամյան փողոց , 3 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 26

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա.Խաչատրյան 1,araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

26 մայիսի 2022 թվականի N 325-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50–րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի վարչական տարածքում գտնվող Աստղիկ Սոսի Մինասյանին սեփականության իրավունքով պատկանող 04-035-0006-0012 ծածկագրով տնամերձ հողամասին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք,գյուղ Գրիբոյեդով ,Մկրտչյան փողոց , 23 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 26

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա.Խաչատրյան 1,araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2022 թվականի N 326-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50–րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի վարչական տարածքում գտնվող Գագիկ Դանաղյանին սեփականության իրավունքով պատկանող 04-050-051- ծածկագրով տնամերձ հողամասին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք,գյուղ Խորոնք ,Մ.Խորենացի 2-րդ փկղ. , 9 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 27

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2022 թվական N 327-Ա

ԱՆԺԵԼԱ ՍԱՅԱԹԻ ԽՈՍՏԵԽՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՍԱՅԱԹ ՆԱԻՐԻԻ ԽՈՍՏԵԽՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33–րդ, 34–րդ, 36–38–րդ հոդվածներով, 41-րդ հոդվածի 3–րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Սայաթ Նաիրիի Խոստեխյանի 2022 թվականի մայիսի 20–ի դիմումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 27-ի N2 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի 15–րդ փողոցի 51 տան բնակիչ Անժելա Սայաթի Խոստեխյանի նկատմամբ (ծնված 24.04.2018թ.) սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով իր հայրական տատիկին՝ Անժելյա Ավետիկի Խոստեխյանին (ծնված 22.10.1962թ., անձնագիր՝ AT0558766):

2. Նախկին Ապագա համայնքի ղեկավարի 2018 թվականի մայիսի 22-ի N21 որոշմամբ Անժելա Սայաթի Խոստեխյանի նկատմամբ խնամակալ նշանակված Սայաթ Նաիրիի Խոստեխյանին ազատել խնամակալի պարտականությունների կատարումից:
3. Հսկողություն սահմանել Անժելա Սայաթի Խոստեխյանի նկատմամբ խնամակալ նշանակված Անժելյա Ավետիկի Խոստեխյանի գործունեության նկատմամբ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 27
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2022 թվական N 328-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄՈՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի մոտ քաղաքացիների ընդունելությունն անցկացնել յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի օրը, ժամը 14:30-ից 17:00-ն:
2. Համայնքի ղեկավարի մոտ քաղաքացիների ընդունելության նախապատրաստումը և կազմակերպումն իրականացնում է աշխատակազմի քարտուղարը:
3. Ընդունելություններին հերթագրվելու համար քաղաքացիները կարող են նաև դիմել փոստով 1124 ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Գայ գյուղ, Ա. Խաչատրյան 1 կամ էլեկտրոնային փոստով araqs.hamaynq@gmail.com:
4. Ընդունելության օրվա փոփոխության դեպքում անմիջապես այդ մասին տեղեկացվում է հանրությանը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 27
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա.Խաչատրյան 1,araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

30 մայիսի 2022 թվականի N 329-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի վարչական տարածքում գտնվող 04-050-065- ծածկագրով կիսակառույցին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք,գյուղ Խորոնք ,Արարատյան փողոց , 2/7 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 30

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

30 մայիս 2022 թվական N 330-Ա

ՆԱՐԻՆԵ ՌԱՖԻԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԾՈՎ ԱՇԽԱՏՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՎԵՐԱՊՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հուվարի 27-ի N 15-Ա որոշումը և ելնելով անհրաժեշտությունից.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2022 թվականի մայիսի 30-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի օգնական Նարինե Ռաֆիկի Դավթյանին ժամանակավորապես վերապահել Արաքս համայնքի սոցիալական գծով աշխատողի պարտականությունները՝ մինչև հաստիքի համալրումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 30

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2022 թվական N 331-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 28-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 10-ի «Գնումների պլանը հաստատելու մասին» N 28-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

   Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 31
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2022 թվական N 332-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 29-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 10-ի «Գնումների պլանը հաստատելու մասին» N 29-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

   Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 31
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա.Խաչատրյան 1,araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2022 թվականի N 333-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող Խորեն Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-056-0028-0006 ծածկագրով բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք,գյուղ Հայկաշեն ,10-րդ փողոց , 6 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 31

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2022 թվական N 334-Ա

ՄԱՅԻՍ 28-Ի ՏՈՆԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մայիսի 28-ի տոնի հետ կապված միջոցառում կազմակերպելու համար ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2022 թվականի բյուջեի 8.2.4-ի (մշակութային այլ ծրագրեր) 4239 հոդվածից հատկացնել 177.000 (հարյուր յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 31
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2022 թվական N 335-Ա

ՀՈՒՆԻՍԻ 1-Ի ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հունիսի 1-ի Երեխաների պաշտպանության միջազգային օրվա հետ կապված Արաքս համայնքի վարչական տարածքի մանկապարտեզներում միջոցառումներ կազմակերպելու համար ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2022 թվականի բյուջեի 8.2.4-ի (մշակութային այլ ծրագրեր) 4239 հոդվածից հատկացնել 330.000 (երեք հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 31
Արաքս համայնք